# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

**Հաշվի առնելով,** որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը կինեզիոլոգիայի և կինեզոթերապիայի ոլորտում,

**Նկատի ունենալով,** որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

**Կարևորելով** կինեզիոլոգիայի և կինեզոթերապիայի պրակտիկությունը կրթության կազմակերպման գործում,

**Ընդունելով** Կողմերի պատրաստակամությունը՝ պրակտիկ համատեղ հետազոտություններ իրականացման, ուսանողների գործնական դասերի կազմակերպման, համատեղ գիտական միջոցառումների և սեմինարների կազմակերպման համատեքստում.

**Հիմք ընդունելով** սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

**Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝**

### 1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

### 2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով համագործակցության շրջանակներում «Հանրապետական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ (այսուհետև՝ Կենտրոն) «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամին (այսուհետև՝ Ինստիտուտ) ներկայացնում է կինեզիոլոգիայի և կինեզոթերապիայի կրթական ծրագրով ուսումնառության և ոլորտի շարունակական զարգացման հետ կապված խնդիրները, իսկ Ինստիտուտն իր պատրաստակամությունն է հայտնում ընդունել այդ խնդիրները և գիտական հենքի վրա ձևավորել մագիստրոսական

թեզերի, ատենախոսությունների և այլ գիտագործնական աշխատանքների թեմաները՝ համապատասխան ամբիոնում:

2.2 Ինստիտուտը պատրաստակամ է պրակտիկ թեմաներ առաջարկել ուսանողներին՝ հետազոտություններ իրականացնելու, իսկ Կենտրոնը պատրաստակամ է գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել հետազոտություն իրականացնող ուսանողներին տրամադրելով Կենտրոնի ենթակառուցվածքները:

2.3 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.3.1 Կողմերի ներկայացուցիչներից կազմված համատեղ խորհուրդների ձևավորման, թեզերի պաշտպանությունների կազմակերպման, հետազոտողների իրականացման միջոցով,

2.3.2 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.3.3 Գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման շուրջ,

2.3.4 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման միջոցով,

2.3.5 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների և փորձաքննությունների իրականացման աշխատանքներում,

2.3.6 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու գործում,

2.3.7 Ուսանողների գործնական դասերի կազմակերպման, ինչպես նաև ուսանողների կարիերայի ձևավորման ուղղությամբ,

2.3.8 Գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման միջոցով:

## 3. Համագործակցության սկզբունքները

3.1 Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության և համագործակցության սկզբունքներով:

## 4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները կատարվում են փոխադարձ համաձայնությամբ և համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:

4.5 Հետագա համագործակցությունը կարգավորվելու է Կողմերի միջև կնքվող առանձին պայմանագրերով:

4.6 Հուշագիրի խզման դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և կանոնավոր ավարտին հասցնելու համար:

4.7 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2025թ. մարտի 26-ին:

4.8 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

**5" Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները**

| **Ինստիտուտ** | **Կենտրոն** |
|---|---|
| «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ | «Հանրապետական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 11 | ք. Երևան, Ամերիկյան 109 |
| Ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան | Տնօրեն՝ Նարինե Մանուկյան |
| ստորագրություն, Կ.Տ. | ստորագրություն, Կ.Տ. |